ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,
www.escs.am

N 02/09.1/29385-2023

ԳԵՎՈՐԳ ՍԼՈՅԱՆԻՆ

(էլ. փոստի հասցեն՝ g.sloyan@gmail.com)

Ի պատասխան *2023* թվականի հոկտեմբերի *19*-ի
թիվ *EDC7-3D3D-9EDC-639B* գրության

Հարգելի՛ պարոն Սլոյան

Հայտնում եմ, որ նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետության շարունակական կրթության համակարգի սկզբնական, ոչ պարտադիր բաղկացուցիչ մասն է: Ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն կատարվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 76-Ն հրամանով հաստատված «Նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգի» համաձայն՝ հերթագրման միջոցով: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները գործում են համայնքների ենթակայությամբ, և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների՝ հաստատություններ ընդգրկումը ևս իրականացվում է գործող իրավակարգավորումների շրջանակում, և որևէ օրենսդրական կամ այլ նախաձեռնություն առկա չէ:

Հավելեմ, որ «Նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանում այժմ կատարվում է փոփոխություն, որով նախատեսվում է, որ սահմանված առաջնահերթությունների իրավունքից օգտվելու համար հերթագրումն իրականացվում է մինչև տվյալ օրացուցային տարվա մարտի 1-ը: Փոփոխությամբ նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունելության առաջնահերթություն չունեցող ծնողները հնարավորություն կունենան նախապես

իրազեկված լինելու նախադպրոցական հաստատությունում արտահերթությամբ գրանցվածների վիճակագրության մասին: Առաջնահերթությունների ցանկում այլ փոփոխություններ կատարելը նպատակահարմար չէ:

Ինչ վերաբերում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857 հրամանով սահմանված նորմերին ու կանոններին, հայտնում եմ, որ, ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գլուխ 8-ի 34-րդ հոդվածի 1-ին կետի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:

Նույն սկզբունքով «Դայակ՝ պետության աջակցությամբ» ծրագիրն էլ իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուշադրության կենտրոնում է հանրապետության բոլոր նախադպրոցական տարիքի երեխաների համար հաստատություններ հաճախելու հնարավորության ստեղծումը, որի ուղղությամբ իրականացվում են նպատակային գործողություններ՝ ՀՀ կառավարության ծրագրերի և օրենսդրական փոփոխությունների տեսքով:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատ.՝ Անի Խաչատրյան
Հանրակրթության վարչության
հանրակրթության և արտադպրոցական
կրթության քաղաքականության մշակման և
վերլուծության բաժին, հեռ.՝ 010-599-619